

ԱՅԻ ԵԳԻ ՊՐՈ ԲԻ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ՎՈՊՐՈՍ ՎԻՆՈԳՐԱԴԱՐԾՎԱ Ի ՎԻՆՈԴԵԼԻԱ

Աշխատություններ

II, 1956

Տր ւ մ

Ա. Ի. ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՅԻ ԵԳԻ ՊՐՈ ԲԻ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԳԻՏՈՎԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՈՐՈՇ
ԱՐԴՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏՈԳԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ,

Սովետական Միության Կռմունիստական պարտիայի XX
համագումարը, ամփոփելով տնտեսական և կուլտուրական շինա-
րարության բնագավառում սովետական ժողովրդի ձեռք բերած
վիթխարի հաջողությունները, մշակեց կռմունիզմի ուղղով մեր
երկրի հետագա առաջընթացի ծրագիրը: ՍՍՌՄ-ի ժողովրդական
տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյակի դիրեկտիվնե-
րում Համագումարը խոչոր միջոցառություններ է նախագծել նաև
զյուղատնաեսության հետագա զարգացման վերաբերյալ Հացա-
հատիկի համախառն բերքը 1960 թվականին պետք է հասցնի
մինչև 180 միլիոն տոննայի (11 միլիարդ ֆթի): Խոչոր չափով
ավելացվելու է տեխնիկական կուլտուրաների, կարտոֆիլի, բան-
ջարեղինի և անասնապահական մթերքների համախառն արտա-
դրանքը: Դիրեկտիվներում միաժամանակ ծրագրված է պառուղ-
ների, հատապուղների և խաղողի արտադրությունը հինգերորդ
հնգամյակի համեմատությամբ ավելացնել առնվազն 1,5—2
անգամ, ընդլայնել պտղատու և խաղողի անկարանների ցանցը
և այդուեղ ապահովել պտղատու ծառերի և խաղողի լավագույն
սորտերի տնկանյութի աճեցումը անհրաժեշտ չափով:

Այդեգործությունը, գինեգործությունը և պտղարուծու-
թյունը վաղուց հանդիսանում են Հայկական ՍՍՌ-ի ժողովրդա-
կան տնտեսության եկամտաբեր ճյուղերը և ունեն զարգացման
մեծ հեռանկարներ: Այդ ի նկատի ունենալով, վեցերորդ հնգամ-
յակի դիրեկտիվներում նախատեսված է ուսուլություններում խռ-
չոր չափով զարգացնել այդեգործությունը, պտղարուծությունը,
իսկ գինիների արտադրությունը ավելացնել 1,4 անգամ: XX հա-
մագումարի դիրեկտիվների կատարումն ապահովելու համար,
Հայաստանի Կոմ. պարտիայի XVIII համագումարի որոշմամբ

1956—60 թվականների ընթացքում ուսուալուրի կայում տնկվելու հն 13 հազար հեկտար խաղողի և 11 հազար հեկտար պտղատու այգիներ։ Նախատեսված է 1960 թվականին բերքատվությունը մեկ հեկտարից հասցնել խաղողի այգիներինը՝ 75—80 ցենտների, իսկ պտղատու այգիներինը՝ 60 ցենտների, խաղողի և պտղատու այգիների սահմանված բերքատվությունն ապահովելու համար հատուկ ուշադրություն է գարձվելու այգիների նոսրության վերացման, ամեն տարի այգիները խորը և համատարած փորելու, սիստեմատիկ կերպով քաղցանելու, փխրեցնելու, ռոռոգելու, պարատացնելու, ժամանակին հիվանդությունների և ջամաստունների գեմ պայքարելու, թմբային այգիները աստիճանաբար շարային այգիների վերածելու և միջնաբարային տարածությունների մշակության մեքենայացնելու և, ընդհանրապես, այգիների մշակության նկատմամբ պարտադիր ագրոմիջոցառութեարի կողմլեքսը լրիվ ու ժամանակին կատարելու վրա։ Այգեգործությունը մեզ մոռ պետք է զարգանա ոչ միայն իր հին բաղայում — Արարատյան գոգնովտում, այլև նախալիննային և, մասնավորապես, ուսուալութիւնը հյուսիսարևելլյան շրջաններում, որոնք պետք է հանդիսանան արդյունարերական այգեգործության զարգացման երկրորդ բաղան։

Վերն առաջադրված խնդիրների կատարման համար ուեռագույն կան ըռլոր պայմանները։

Տարրեր ուելյեֆի և դրանց համապատասխան հողակլիմայական պայմանների բազմազանության շնորհիվ, միանդամայն հնարավոր է մշակել տնտեսապես արժեքավոր տարրեր հատկություններով օժաված ինչպես սեղանի, այնպես էլ գինու խաղողի զանազան սորտեր։

Արարատյան գոգնովտում զարեր շարունակ մշակվող խաղողի այգիների մասսիվները, բարձրորակ սեղանի խաղող տալու հետ միասին, հիմնականում հանդիսանում են հանրահայտ թունդ, կիսաքաղցր և քաղցր (Մագերա, Խերես, Պորտվեյն, Մուսկատ) գինիների և լավագույն կոնյակների արտադրության բաղայական պատճեն է ապահովության համապատասխան հյուսիսարևելլյան շրջաններում ստեղծվող այգեգործության նոր բազան պետք է ծառայի սեղանի թեթև և շամպայն գինիների արագագությունը ընդլայնելու գործին։

Սովորական Միության գինեգործության արդյունարերության աայսուցման ցանկում ճիշտ կերպով որոշված է մեր ուեռ-

պուրիկայի գինեգործության զարգացման ուղղությունը: Համաձայն այդ ռայոնացման՝ մեզ մոտ առաջիկայում պետք է զարդանա հատկապես քաղցր, կիսաքաղցր և շամպայն գինիների ու կոնյակի արտադրությունը:

Անհեցած բնական բազմազան պայմաններին համապատասխան, ներկայում ընդլայնվում և վեցերորդ հնդամյակի ընթացքում ընդդրկելով նորանոր շրջաններ, Ծեսպուրիկայում է՛ ավելի է զարդանալու գիֆերենցված գինեգործության արդյունաբերությունը: Հազարամյակների պատմության ընթացքում, որպիսին ունի խաղողի մշակությունը Հայոստանի երկրագործության կուլտուրայում, ժողովրդական սելեկցիայի միջոցով սաեղծվել են խաղողի բազմաթիվ բարձրորակ սորտեր:

Խաղողի տեղական սորտերի այդ հարուսատ փոնդի, ինչպես նաև դրական բերած և դիտության աշխատողների նոր ստեղծած լավորակ սորտերի սացիոնալ և նպատակագիր օգտագործումը, օրբստորել զարգացող գինեգործության արդյունաբերությունը հումքով առանովելը և բարձրորակ գինիների ու կոնյակի ստեղծումը հանգիստնում են գիտության և արտադրության աշխատողների պատվագոր խնդիրը: Վերը նշված առաջադրանքներից էլ բխել են այն հարցերը, որոնք դրված են եղել Այգեգործության և գինեգործության ինստիտուտի գիտական աշխատողների առաջ և այդ ուղղությամբ էլ վերջին տարիներում տարվել են գիտահետազոտական աշխատանքները:

Այդ հարցերն են.

1. Խաղողի բարձր բերքատու և տնտեսական արժեքավոր հատկություններով օժտված նոր սորտերի ստեղծումը և հին սորտերի որակի լավացումը, այսինքն՝ սեղանի խաղողի այնպիսի սորտերի ստեղծումը, որոնք հասունանում են տարրեր ժամանակներում և փոխադրունակ են, գինու խաղողի այնպիսի սորտերի ստեղծումը, որոնք օժտված լինեն բարձր թթվության և շաքարի պարունակությամբ, որպիսին բխում է մեր գինեգործության պահանջներից:

2. Ջրովի և անջրդի տարրեր հողային և կլիմայական պայմաններում այդեղործության զարգացման և այդիներից բարձր բերը ստանալու ագրոտեխնիկական կոմպլեքս միջոցառումների մշակումը:

3. Բարձրորակ գինիների և կոնյակի ստացման նոր տեխնո-

լոգիական է փեկտիվ մեթոդների մշակումը և գինեգործության համար հումքային նոր սայսնների հայտաբերումը:

Նշված հարցերի լուծման բնագավառում Այգեգինեգործական ինստիտուտի գիտական աշխատողների կողեկտիվը վերջին տարիներում հասել է որոշակի արդյունքների: Կիրառելով Միչուրինյան ագրորիկոլոգիայի գիտահետազոտական աշխատանքի մեթոդները, այժմ ստեղծված և արտադրության մեջ ներդրվում են ինը նոր, բարձր բերք տվող և անտեսական արժեքավոր հատկություններով օժաված խաղողի սորտեր: Այդ սորտերից հինգը՝ Արմենիա, Հրազդանի, Արագածի, Վարդենի և Տօկուն հանդիսանում են սեղանի խաղողի, իսկ չորսը՝ Հաղիսի, Ներկենի, Գառմուս և Նայիրի — զինու սորտեր: Բացի նշված սորտերից, լրացուցիչ ուսումնասիրության համար առանձնացված են գինու և սեղանի խաղողի 100-ից ավելի էլիտային սերմնարույներ, որոնցից 24-ը հաշվում են գերվազահաս և վաղահաս սորտերի թեկնածուներ:

Ուսումնաբարձրիկայի տարրեր վայրերում կատարված սեղեցիոն աշխատանքներով բացահայտված է լինային որոշ շրջաններում խաղողի մշակության հնարավորությունը: Լինինականի սարահարթում խաղողի մշակության գծով կատարած առաջին փորձնական աշխատանքները տվել են դրական արդյունքներ: Պրաշնորհիվ ներկայումս գիրեկտիվ օրգանների որոշմամբ Լինինականում հիմնված է փորձահենակետ, որտեղ տարվում են ուսումնասիրություններ խաղողի ցրտադիմացկուն սորտեր սասանալուն պատճենված: Փարաքարի էքսպերիմենտալ բազայում հիմնագրված է խաղողի 350-ից ավելի սորտերի կոլեկցիա: Այդ կոլեկցիայի 210/0 հանդիսանում են տեղական, 660/0 ներմուծած և 100/0 սեղեցիոն նոր սորտերն ու կոսնները: Կոլեկցիայի այդ ֆոնդի ուսումնասիրությունը, որպիսին կատարվում է ներկայումս, հնարավորություն կտա առաջիկայում առանձնացնելու լավագույն սորտեր արտադրության մեջ ներդնելու համար: Մեծ ուշադրություն է դարձվում խաղողի ցրտադիմացկուն սորտերի ստացման վրա: Բարձրորակ ցրտադիմացկուն սորտեր ունենալու գեպքում, հնարավորություն կունենանք Արարատյան գոգհավառում խաղողը մշակել առանց ձմռանը թաղելու և այդ կուլտուրան բարձրացնելու լեռնային շրջանները:

Գիտահետազոտական ծավալուն աշխատանքներ են կատար-

զել հյուսիս-արևելյան Շոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի և Ալավերդու) ֆիլոքսերայով վարակված շրջաններում:

Այստեղ՝ ինստիտուտի Կողքի փորձահենակետում և աար-
բեր հողակիմայական պայմաններ ունեցող 12 կոլտնտեսու-
թյուններում հիմնագրված փորձնական այդիներում, մի շարք
տարիների ընթացքում, տարվել են ուսումնական անեցնելու, համեմատա-
կան ֆիլոքսերադիմացկան սորտերի հայտարերման, պատվաս-
տակալի և պատվաստացուի ընտրության, վաղի ձևավորման,
անդառության, ֆիլոքսերայի դեմք քիմիական մեթոդներով
պայքարի միջոցառումներ մշակելու ուղղությամբ: Թվարկած
աշխատանքների հետևանքով պարզվել են, որ նշված շրջաններում
անջրդի պայմաններում միանգամայն հնարավոր է խաղողի
մշակությունը: Անջրդի պայմաններում տնկած փորձնական
այդիներից ագրոսեխնիկայի կոմպլեքսի լրիվ կիրառման միջո-
ցով հեկատրից ստացվել է մինչեւ 250 ց քերք: Պարզվել է, որ
Բերլանդիերի \times Ռիպարիա 5 ԲԲ-Ն և Բերլանդիերի \times Ռուպեստրիս
420 Ա.Ն հանդիսանում են լավագույն պատվաստակալները և որ
տեղական սորտերից Զըջըռուկը համեմատարար շատ գիմացկուն է
ֆիլոքսերային: Այդ փորձերից միաժամանակ պարզվել է,
որ նշված պատվաստակալների վրա լավ աճում և հեկտա-
րից 75—270 ց քերք են տալիս աեղական սորտերից Լալ-
վարին, Զըջըռուկը, Ներմուծված սորտերից՝ Աքածիթելին, Ալի-
գուեն, Կարելնեն, Պինո սեր, Պինո շարդոնեն, Ֆիլոքսերայի-
գեմ փորձարկած քիմիական պլեարատաներից դիքլորէթանը
տվել է բարձր էֆեկտ, գրա 100 գ մեկ քառ. մետրի վրա տվել է
ֆիլոքսերայի 93% մահացություն: Ներկայումս այդ ուղղու-
թյամբ արտադրական լայն փորձեր են կատարվում:

Հյուսիս-արևելյան շրջաններում կատարած աշխատանքնե-
րի դրական արդյունքները ներկայացված են Գյուղատնտեսու-
թյան մինիստրությանը, որի համանությամբ առաջարկված մի-
ջոցառումներից մեծ մասը ներկայումս հաջողությամբ կիրառ-
վում է նշված շրջանների կոլտնտեսություններում:

Ինստիտուտն այդեզրծության հիմնական բազայի Արարատ-
յան գոգնովածի մի շարք սովորողներում, կոլտնտեսություններում
և սեփական էքսպերիմենտալ բազաներում փորձնական գիտահե-
տազոտական աշխատանքներ է կատարում խաղողի վաղի սննդա-
ռության և սոսպման ուժիմի, ֆիտոտեխնիկայի, երիտասարդ

այգիները վաղ բերքի հասցնելու, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի ռացիոնալ եղանակների մշակման, օրդանական պարարտանյութի զեփիցիտը լրացնելու նպատակով կուլպոստային պարարտանյութերի օգտագործման էֆեկտիվության հարցերը պարզելու և առաջարային (դոկտի) հոգերի յուրացման ուղղությամբ, — այդիների մշակման ռացիոնալ ագրոկոլումպեքսը որոշելու համար:

Կատարած աշխատանքները տվել են իրենց առաջին դրական արդյունքները: Բաղրամյանի անվան սովորողում վաղի ձեւվավորման փորձերը ցույց տվին, որ շարային այդիներում բազմաթե հովհարային կանոնավոր ձևավորումը կիրառելուց մեծ էֆեկտ է ստացվում: Փորձնական 6,5 հեկտար չորս տարեկան այգու յուրաքանչյուր հեկտարից ստացվեց 193 ցենտներ բերք, կից ոչ փորձնական այգուց ստացված 70—80 ց դիմաց:

Ուրածիթելի և Բանանց սորտերի խաղողի երեք տարեկան փորձնական այգուց երկար էտ (վաղին 40—80 աչք) և բարձր ագրոֆոն կիրառելու (հեկտարին 600 կգ սուտերֆոսֆատ, 300 կգ ազոտական հանքային պարարտանյութ տալու և միջնարքային տարածությունը 3—4 անգամ մշակելու) շնորհիվ հեկտարից ստացվեց 141 ց բերք:

Խաղողի շարային այգիների պարարտացման փորձերը ցույց տվեցին, որ մեծ քանակով և որակով բերք ստացվում է այն գեպքում, երբ այդիները պարարտացնում են օրգանահանքային պարարտանյութերի խառնուրդով և երբ այդ պարարտանյութերը տալիս են վաղի արժանակին ավելի մոտ, այսինքն՝ միջնարքային տարածությունում 30—40 սմ խորությամբ, գարնանը խոր վար կատարելիս:

Այժմ շատ սովորողների շարային այգիներում կիրառվում է պարարտացման նման ձեւը՝ Սակայն շատ հաճախ պրակտիկայում որևէ պարարտանյութի պակասության հետեանքով խախտվում է պարարտանյութերի խառնուրդով պարարտացնելու վերահշյալ կարգը: Ուսումնասիրությունները ցույց են տվել որ նման խախտումը բացասական ազդեցություն է թողնում բերքի որակի վրա:

Եթե այգին պարարտացնում ենք տարբեր հանքային և օրգանական պարարտանյութերի խառնուրդով, այս գեպքում ստացվում է քանակով ավելի և որակով բարձր բերք: Միմիայն մեկ տեսակ հանքային, առենք ազոտական, պարարտանյութով

պարարտացնելիս, չնայած բարձրանում է բերքի քանակը, սակայն ընկնում է նրա որակը, նման բերքից պարարտած գինին լինում է անկայուն և անորակ:

Փորձերով աղացուցված է, որ պարարտացման ամենալավ ձեր՝ զա օրդանահանքային պարարտանյութերի խառնուրդը այդիների գարնան խոր վարի միջոցով մտցնելու ձևն է, իսկ օրդանական պարարտանյութի բացակայության դեպքում՝ գոնք հանքային պարարտանյութերի խառնուրդով (NPK) պարարտացնելը:

Խաղողի վազի օիդիում հիվանդության գեմ պայքարի համար, նախակինում աղացած ծձմրի օգտագործման փոխարեն, ինստիտուտը, փորձնական աշխատանքներից ելնելով, արտադրությանն է առաջարկել օգտագործել կոլորիդ ծծումքը, որը տնաեսապես ավելի ձեռնառու է և տալիս է ավելի լավ էֆեկտ:

Ոսոգման ռեժիմի հարցերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդիների ոսոգման էֆեկտիվ եղանակը զա միջարքային տարածությունում տրամադրաբարշ ունիվերսալ ԵՄ-60 մեքենայով բացած 2 ակոսով ոսոգման եղանակն է:

Փարաքարի առապարային հողերում ինստիտուտը մի շարք տարիներ է ինչ կատարում է փորձնական աշխատանքներ: Այսուղեղ զրված փորձերին նպատակը առապարային հողերում այդիների հիմնարման հետ կապված մի շարք հարցերի լուծումն է, ինչպեսիք են՝ այդիների անկման համար հողի նախապատճառաման, հիմնաշրջման, այգեանկման և առաջին տարիների խնամքի, վազի ձևավորման, միջարքային տարածության մշակման սիստեմների լուծումը և նրանց անտեսական հիմնավորումը: Այս հարցերի ուսումնասիրությունը շատ կարելոր նշանակություն ունի, քանի որ առաջիկայում այգեգործության զարգացումը մեծապես պետք է կատարվի Արդնի — Շամիրամի կառուցվող ջրանցքի տակ գտնվող առապարային հողերի յուրացման հաշվին:

Բիոքիմիայի լուրորատորիայի կատարած հետազոտական աշխատանքների շնորհիվ բացահայտված են վազի բիոքիմիական պրոցեսների և նրա ցրտադիմացկունության միջև եղած կապի մի շարք հարցեր: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բիոքիմիական առանձին ցուցանիշների որոշման միջոցով գաղափար կազմել խաղողի տեղական և ներմուծած զանազան սորտերի ցրտագիմացկունության աստիճանի մասին: Այս

լարորատորիայում ներկայումս կատարվող ռւսումնասիրությունների նպատակն է պարզելու ագրոտեխնիկական այս կամ այն ձեռնարկման աղբեցությունը վաղի րիսքիմիկական պրոցեսների, ինչպես և ցրտադիմացկունության աստիճանի բարձրացման վրա: Այդ աշխատանքի դրական արդյունքները մեզ հնարավորություն կտան ագրոտեխնիկական ձեռնարկումների միջոցով բարձրացնել խաղողի վաղի ցրտադիմացկունությունը:

Այժմ ինստիտուտի առաջնահերթ խնդիրը պնտք է լինի թվածո փորձնական աշխատանքների արդյունքները ի մի ամփոփել, մշակել Արարատյան գողովառվառմ կենտրոնացած այշգիների համար ուսցիունալ կոմպլեքս արդատեխնիկական միջոցառումներ, այն ներդնել արտադրության մեջ, որի կիրառումը կապահովի բարձր բերքի ստացումը. միաժամանակ պետք է ամփոփել նախկինում կատարած որոշ աշխատանքները և լրացուցիչ գիտա-կազմակերպչական աշխատանքներ կազմակերպել կուտանսեառությունների հին թմբային այդիները այս կամ այն ձեռով շարայինի վերածելու համար, զրանց մշակությունը մերքենայցնելու նպատակով:

Գիտահետադուտական որոշակի աշխատանքներ են կատարված գինեգործության և կոնյակի արդյունաբերության բնադրավառություն:

Ինստիտուտը մշակել և արտադրությանն է հանձնել քննկենատա և «Սեմիլիլիոն» լիքոյորային ու «Արևիկ» զեներտային զինիների ստացման տեխնոլոգիան: Փորձնական աշխատանքներով ապացուցված է Ազիզրեկովի շրջանում տարածված խալողի Արևնի սորտից «կարմիր շամպայն» գինու և հյուսիսարևելյան շրջաններում տարածված Լարվարի սորտից բարձրորակ շշամպայն գինու ստացման հնարավորությունը: Այժմ մշակվում է «Ներենա» և «Մագերա» գինիների կարճ ժամկետում արտադրելու տեխնոլոգիան: Փորձարկվում է «Կահոր» գինու ստացման նոր տեխնոլոգիան, ինչպես նաև մշակվում են մարկային գինիների հասունացման ժամկետների կրծամաման մեթոդները: Լարուրատոր պայմաններում ուսումնասիրվում են գինու թթվության անկման պատճառները և մշակվում են զրանց որոշման մեթոդները:

Արտադրության պայմաններում գինու պղտորման պատ-

հառների ուսումնասիրության հետեւանքով առաջարկներ են ներկայացված Պարենային արդյունաբերության մինչևտրությանը, զինիները պարզեցնելու և նրանց կայունությանը բարձրացնելու համար իրեւ սոսնձանյութ կիրառել նուռնուսի դիմատոմիտը:

Կոնյակի հնացման պլրոցեների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց մշակելու կոնյակի սպիրտի կորուսաների իջեցման միջոցառումներ, որոնք այժմ հիմնականում կիրառվում են արտադրության մեջ: Այս աշխատանքի կարեռությունը պատկերացնելու համար բավական է նշել որ կոնյակի սպիրտի կորուսաների յուրաքանչյուր 0,10/° Միության կոնյակի գործարանների համար կազմում է տարեկան 3,5 միլիոն ոռորդի: Փորձնական աշխատանքների տվյալների հիման վրա արտադրությանն է առաջարկված կոնյակի սպիրտի որակի բարձրացման նոր եղանակ՝ զինություրման ժամանակ նրա մեջ շաբարասնկերի մնացորդի քանակը բարձրացնելու միջոցով:

Արտադրության պայմաններում փորձարկվում է ինստիտուտի առաջարկած նոր մեթոդը, որի կիրառումը հնարավորություն կտա կոնյակի սպիրտը կոնյակ գարձնելու ժամկետը կը ըստանիլ 2—3 անգամ: Այս ձեռնարկումը, որը չի կատարվում որակի իջեցման հաշվին, նույնպես կնպաստի կորուսաների քանակի կրճատմանը և արտադրության ինքնարժեքի իջեցմանը:

Ներկայումս շարունակվում են գիտահետադրուտական աշխատանքներ վերը մատնանշված հարցերի լուծման ուղղությամբ: Այդ նպատակով Արարատյան գոգհավատի և հյուսիսարևելյան շրջանների կոլտնտեսություններում, սովորողական գինեգործարաններում, ինչպես նաև սեփական փորձանենակետերում հիմնարկված են մի շարք փորձեր: Ազրտակինիկայի գծով դրված փորձերում հիմնական ուշադրությունը դարձվում է այնպիսի կարևոր հարցերի ուսումնասիրման վրա, ինչպիսիք են՝ նողի նախապարասառումը այդիների տնկման համար, նոր տնկած այդիների խնամքի սացիոնալ եղանակի բնարությունը, երիտասարդ արդիների բերքի բերելու ժամկետի կրճատման միջոցառումները, խաղողի վաղի սնման մակերեսի, բեռնվածության կանոնավորման և ձեռավորման ընտրության խնդիրները, վաղի սնման դոզաների և պարարտանյութերի համատեղ օգտագործման էֆեկտիվության որոշումը, ուղղման տեխնիկայի և ուժիմի կարգավորումը, հողի միկրոֆլորայի դերը պարարտանյութերի էֆեկտիվության և նողի բերքիության բարձրացման

գործում, այդինքը միջարքային տարածությունների մշակումն եղանակը, վեասատուների և հիվանդությունների զեման պայքարի ռացիսալ միջոցառումների մշակումը և այլն: Այս հարցերի ռասումնափրությունը համարավորություն կտա ստեղծելու այդինքը բերքատվության բարձրացման ռացիսալ եղանակներ:

Խաղաղի սկզբանայի գծով տարվող աշխատանքները հիմնականում կենտրոնացված են ունեցած բազմաթիվ սերմանարույների, կլանների և կողեկցիայի մեջ ընդուկված սորտերի ռասումնափրության վրա: Նպատակադիր աշխատանքները են կատարվում բարձրարժեք հատկություններով օժտված խաղի նոր սորտերի, այդ թվում նաև ցրտադիմացկուն սորտերի սահմանամարդակերպության և կոնյակի արտադրության հարցերով:

Գիհնեգործության և կոնյակի արտադրության հարցերով զբաղվող գիտական աշխատաղղները հատուկ ուշադրություն են դարձնում արտադրության պրոցեսում գոյություն ունեցող կորուսոների գեր պայքարի միջոցառումների մշակման, տարեկը տեսակների գինիների և կոնյակի արտադրման նոր տեխնոլոգիական մեթոդների սահմանման վրա:

Սակայն պետք է նշել, որ ինստիտուտի մինչև հիմտ կատարած գիտահետազոտական աշխատանքները չեն կարող բավարարել խոշոր տեմպերով զարգացող արտադրության պահանջներին:

Այդեղործության և գինեգործության բնագավառում մեր ինստիտուտի, ինչպիս նաև գյուղատնտեսության մյուս ճյուղերի գծով աշխատող գիտահետազոտական հիմնարկների, թերությունները — ինչպես այդ մասին միանգամայն ճիշտ կերպով մատնանշված են ՍՄԿՊ Կենտկոմին ՍՍՀԽՄ Մինիստրների Սովիետի 1956թ. գետրվարի 14-ի «Գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկների աշխատանքների բարելավման միջոցառումների մասին» որոշման մեջ — կայանում են նրանում, որ մենք չենք զրադիմում գյուղատնտեսության էկոնոմիկայի, արտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման հարցերով:

Անբավարար կերպով են մշակվում այնպիսի կոմպեքս միջոցառումներ, որոնք կկարողանային նպաստել գյուղատնտեսության ճիշտ վարելուն և ըստ յուրաքանչյուր հողակիմայական գոտու գյուղատնտեսական արտադրանքի անընդհատ ավելացմանը:

Դեռևս անբավարար է գիտական աշխատաղների կապը կուտանակությունների, մեքենատրակտորային կայանների, սովորողների և գինեգործարանների հետ. քիչ է օգնություն ցույց տրվում պրակտիկ աշխատաղներին՝ արտադրության բարձրացման միջոցառումների մշակման, առաջավոր կոլտնտեսությունների, ՄՏ կայանների, սովորողների, գինեգործարանների նվաճումների և արտադրության առաջավորների փորձերի ուսումնասիրության գիտական ընդհանրացման, պրոպագանդման և արտադրության մեջ դրանք ներդրելու գործում:

Գիտության և արտադրության աշխատաղների միջև անբարար կապի հետեւանքով կոլտնտեսային և սովորողային արտադրության մեջ զանգազ են արմատավորվում գիտության նվաճումները։ Գյուղատնտեսության որևէ ճյուղի զարգացման նկատմամբ արված գիտական առաջարկները շատ հաճախ չեն զուգակցվում տվյալ չքանում կամ կոլտնտեսությունում այլ ճյուղերի զարգացման հարցերի հետ։ Առանձին գիտաշխատաղներ աշխատելով գիտահետազոտական հնացած մեթոդներով, չեն տալիս արտադրությանը պիտանի, գործին նպաստող աշխատանքներ։

Նախկին Այգեգինեղործության և պտղաբուծական ինստիտուտների բազայի վրա այժմ կազմակերպված և ՀՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության տնօրինությանը հանձնված Այգեգործական-գինեգործական գիտական աշխատաղության համար կատարած աշխատանքները, կոնկրետ միջոցառումներ է ձեռնարկել թվարկած թերությունները վերացնելու և գիտահետազոտական աշխատանքները ՄՄԿՊ կենտրոնմի և ՍՍՀՄ Մինիստրների Սովետի 1956 թ. փետրվարի 14-ի որոշման պահանջներին համապատասխան կատարելու համար։